

ՍՈՒՏՆ ՈՒ ՔԱՄԻՆ

(Շուրջից)

Երբ Արարիչը կամեցաւ ջնջել
Մեղսոտ աշխարհը ջրի հեղեղով,
Եւ արքաներին խեղդամահ անել
Իրանց հպատակ ժողովուրդներով,
Որ ապագայում կեանքը հանրային
Վերանորոգուի թարմ սերունդներով—
Նա հրամայեց ալեոր Նոյին
Ողջ էակներից զոյգեր ընտրելու,
Եւ իր փրկաբար կենաց տապանում
Բոլոր զոյգերին պատսպարելու:

Եւ ահա բոլոր երկրի ծայրերից
Գալիս են, թռչում, սողում դէպ տապան—
Արուն էգի հետ, ջուկ ջուկի յետքից
Կենաց յարկի տակ փնտռում ապաստան:

Երկնից հրամանին հլու, խոնարհած՝
Ե՛ւ եթերային եկան ոգիներ,
Մարդկային ոգու ոյժերից ծնուած՝
Աննիւթ, վերացիկ շատ գաղափարներ.—
Եւ հեղաբարոյ մտաւ Զոչումն՝
Ապաշխարութեան ձեռքիցը բռնած,
Ապա զոյգերով Անկարութիւնն՝
Ապիկարութեան ուսերին յենուած,

Մտեմութիւնը գրկուած Սիրոյ հետ
 Եկաւ ու մտաւ ուրախ ու վէտ-վէտ,
 Ահա նենգարար յուշիկ սողալով,
 Ոխը հետեւեց Վրէժխնդութեան,
 Երկիւղն անվստահ, անվերջ դողալով,
 Սահեց ու փարուեց մեղկ վախկոտութեան.
 Սրանց յետեւից տապանը մտան
 Ստրկութիւնը՝ Շողոմորթութեան,
 Անդորութիւնը՝ Խաղաղութեան հետ,
 Իսկ Տրտմութիւնը մաշլ, յուսահատ
 Հետեւեց Վոսին լալով անընդհատ.
 Վերջապէս մտաւ տապան փրկաւէտ
 Ե՛ւ ջերմ Հաւասը գրկուած Յոյսի հետ:

Աւանդութիւնը այսպէս է ասում:
 Փորսողի տալով նրանց մէջ թագուն
 Եկաւ և՛ Սուրը ճարպիկ ու ճկուն.
 Կրկուրի նման կրկում է, խօսում,
 Արնէտի նման սուլում, վախում,
 Մերթ թագնւում է, կուչ գալիս, լսում:
 Այս և այն ձեւին համակերպուելու,
 Սրան կամ նրան նա նմանուելու,
 Փորձեր է անում,
 Փրկութեան տապան մտնել է ջանում.
 Բայց իզուր, նրան այդ չէ յաջողում,
 Նոյի թափանցիկ աչքից սրատես
 Սուտը խուսափել չէ կարողանում.
 Եւ ձայնը Նոյի հնչում է այսպէս.
 — Դու էլ ես այստեղ, բայց ո՞վ է քեզ հետ,
 Մենակ ուրեմն... Դէ, շուտ դարձիր յետ.
 Գնա՛, գտիր քեզ արժանի ընկեր,
 Եթէ ուզում ես հեղեղից փրկուել:

Ու գնաց Սուտը տխուր ու նրկուն
 Եւ ճանապարհին պատահեց Քամուն:

—Այս ո՛ւմ եմ տեսնում, սիրելի ընկեր,
 եւ այդպէս տխուր... Ինչ է պատահել,
 Չէ՞ մի ժամանակ զերթ ազատ թռչնիկ,
 եւ խայտաճամուկ որպէս թիթեռնիկ,
 Դու թռչում էիր ինձնից էլ արագ.

«Ասէ-կօսէի» խմբակների մէջ,—

Սիրած բոյրերիդ չըջանում անվերջ,
 Թափառում էիր ազատ, համարձակ,
 Առասպելական շուրերդ հագնում,
 Թեթեւ ու ճկուն նրանց մէջ թագնւում:

—Ա՛խ, իմ սրտակից, սիրելի ընկեր,
 Դժբախտութեան եմ այսօր հանդիպել.

Նոյի մօտ էի,

Եւ գիտես էլի

Ասում է,—հարկաւ, սրտանց եմ ուրախ
 Ընդունել և՛ քեզ իմ համեստ փարախ,
 Սակայն ո՛չ մենակ... մտիր անարգել,
 Երբ կը ճարես քեզ արժանի ընկեր.—
 Ի՛մ հոգու հատոր, ազնիւ բարեկամ,
 Գնանք միասին, օգնիր այս անգամ:

Քամին տալիս է Ստին պատասխան՝

—«Ասա, բարեկամ, չը գիտես միթէ
 Որ իմ երկրային թռիչքը թեթեւ

Ազատ, անարգել չունի մի սահման.

Նոյի տապանը չէ՞ որ ինձ համար

Նեղ է, անազատ, անպէտք, անյարմար:

Բայց դէ ի՛նչ արած, քանի խնդրում ես

Տեղափոխուելու քեզ հետ միասին—

Օգնել ընկերոջ պատրաստ եմ և՛ ես.

Միայն տապանում երբ տեղ ստանաս

Ի՛նչ վարձատրութիւն դու ինձ պիտի տաս»:

—«Օ՛, ամենայն բան, ինչ էլ կամենաս,

(Քո հաւատարիմ ստրուկն եմ, գիտնաս),

Եւ այն ամենը, ինչ ձեռք կը բերեմ՝
 ես դիւրահաւատ մարդկանց շրջանում,
 Իմ ճարպիկութեամբ ինչ էլ ժողովեմ,
 Պարգեւել միայն բեղ եմ խոստանում:

Այն օրից, ինչ որ Սուտն է ժողովում,
 Սղատ, համարձակ Քամին է տանում:

Լինում են օրեր, այլ և տարիներ,
 Երբ առատօրէն նա հունձ է անում,
 Կառուցանում է քարեայ կամարներ,
 Նրանց դռներին փականքներ դնում:
 Ե՛ւ խորհրդաւոր մոլթ նշաններով,
 Ե՛ւ ահեղագոյ բիւր նղովքներով,
 Փակում, կնքում է անխորտակելի
 Ամուր նիգերը հսկայ շէնքերի:
 Բայց քամին խիզախ—օգին ճշտութեան,
 Աւետաբերը վէհ ազատութեան՝
 Թռչում է իսկոյն և անմատչելի
 Զարդում, փշրում է դռներն ու շղթան
 Գոռ ու անառիկ ամրութիւնների:
 Եւ բեկորները հսկայ շէնքերի
 Մի հզօր թափով ցրիւ է տալի—
 Որպէս մոլթ երազ խօլ զառանցանքի,
 Կամ որպէս փոշի լայն անապատում,
 Որպէս թանձր ծուխ վառուած խարոյկի
 Անսահման դաշտում:

Թարգ. ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ